ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) և Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) (այսուհետ միասին՝ Կողմեր),

Ղեկավարվելով սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի որորտներում անվտանգության ապահովման և մարդու առողջության ապահովման անհրաժեշտությամբ,

Հիմք ընդունելով մարդու առողջության համար սննդամթերքի հնարավոր վնասակար ազդեցությունից պաշտպանության բարձր առաքելությունը,

Կարևորելով սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում գիտական հետազոտությունների, ուսումնասիրությունների, փորձերի, նվաճումների և ձեռքբերումների կիրառումը,

Հաշվի առնելով սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում իրականացվող քաղաքականության մշակման, առկա խնդիրների լուծման գործում Կողմերի առանձնահատուկ դերը,

Բարձր գնահատելով սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում անվտանգության ապահովման գործում Կողմերի արդյունավետ համագործակցության նշանակությունը,

Կնքեցին համագործակցության սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Հուշագրի նպատակն է սահմանել Կողմերի միջև համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմանները:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը համագործակցում են հետևյալ ուղղություններով՝

2.1. Ծառայության կողմից սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի ոլորտներում իրականացվող միջոցառումների մշակման, առկա խնդիրների լուծման և դրանց վերաբերյալ քննարկումներին ապահովվում է Համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցությունը,

2.2. Ծառայության մասնագետները ներգրավվում են Համալսարանի ուսումնական գործընթացին՝ Համալսարանի դասախոսական և ուսանողական լսարանի համար սննդամթերքի անվտանգության ոլորտի օրենսդրության, ռիսկերի գնահատման և կառավարման, ինչպես նաև վտանգի վերլուծության հսկման կրիտիկական կետերի (HACCP) համակարգի ներդրման, կիրառման վերաբերյալ խորացված սեմինարների, դասընթացների, դասաժամերի անցկացման ձևով,

2.3. Համալսարանի կողմից կազմակերպվող գիտական կոնֆերանսներին և քննարկումներին ապահովվում է Ծառայության մասնագետների մասնակցությունը,

2.4. Համալսարանի մասնագետներն ընդգրկվում են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակման-լրամշակման աշխատանքներում,

2.5. Համալսարանի ուսանողները ներգրավվում են Ծառայության կողմից իրականացվող իրազեկման և մոնիտորինգային աշխատանքներին,

2.6. Համալսարանի գիտնականները, լաբորատորիաները ներգրավվում են Ծառայության կողմից իրականացվող համապատասխան գիտագործնական աշխատանքներին,

2.7. Ծառայության մասնագետները ներգրավվում են Համալսարանի ուսումնական ծրագրերի կազմման աշխատանքներում,

2.8. անասնահամաճարակային բռնկումների դեպքում, բուսասանիտարական հիվանդությունների դեմ պայքարի գործողություններում Համալսարանի համապատասխան մասնագիտությամբ ուսանողները ներգրավվում և մասնակցում են հիվանդությունների առաջացման, համապատասխան կանխարգելիչ և բուժիչ միջոցների (դեղամիջոցների) քննարկման, վերլուծության և կառավարման գործընթացներին,

2.9. Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից Ծառայության մասնագետների մասնագիտական գիտելիքների (սննդամթերքի անվտանգություն, բուսասանիտարիա, անասնաբուժություն) բարելավման նպատակով կազմակերպվում են ուսուցման, վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ,

2.10. Ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» և «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ներում իրականացվող գիտական աշխատանքներում ներգրավվում է Համալսարանի գիտական ներուժը, իրականացվում են համատեղ գիտական ծրագրեր և գործնական մասնագիտացում,

2.11. Համալսարանի անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ուսանողների համար ապահովվում է Ծառայության ենթակայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Հատուկ վտանգավոր ախտածինների ռեֆերենս լաբորատորիայում ուսումնական պրակտիկայի անցկացումը,

2.12. Համալսարանի ուսանողների համար ապահովվում է Ծառայությունում ուսումնական պրակտիկայի անցկացման հնարավորություն՝ ստուգումներին, դիտարկումներին, մշտադիտարկումներին մասնակցելու հնարավորությամբ,

2.13. ապահովվում է Համալսարանի կողմից երաշխավորված երիտասարդ շրջանավարտներով և մասնագետ աշխատակիցներով Ծառայության աշխատակազմի և համակարգի համալրումը,

2.14. համագործակցում են նորահայտ հիվանդությունների և վարակիչ հիվանդությունների նոր ենթատիպերի բացահայտման և ուսումնասիրության շրջանակներում,

2.15. Համալսարանի կողմից Ծառայությանը տրամադրվում են իր կողմից հրատարակվող գիտական ամսագրերը, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի ոլորտներում գիտական հետազոտությունների, ուսումնասիրությունների, փորձերի արդյունքների և ձեռքբերումների մասին տեղեկատվություն:

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

3.1. Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության արդյունավետ իրականացման նպատակով Ծառայության պետը և Համալսարանի ռեկտորը նշանակում են պատասխանատու ներկայացուցիչներ:

3.2.Պատասխանատու ներկայացուցիչները համակարգում են Կողմերի հաղորդակցությունը և կազմակերպում են համատեղ աշխատանքային հանդիպումները:

4.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կողմերն ընդունում են, որ սույն Հուշագրի շրջանակներում չեն կարող առաջանալ ֆինանսական կամ այլ նյութական պարտավորություններ, բացառությամբ, երբ Կողմերը լրացուցիչ համաձայնագրերով հաստատում են նման պարտավորությունները համագործակցության որևէ ուղղությամբ իրականացվող համատեղ ծրագրի շրջանակում:

5. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

5.1. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ այդ մասին մյուս կողմին գրավոր ծանուցելով:

5.2. Հուշագրի գործողության դադարեցման դեպքում նախկինում Կողմերի կնքած և ֆինանսավորված լրացուցիչ համաձայնագրերը շարունակում են գործել մինչև դրանց գործողության ավարտը, եթե կողմերը փոխադարձ համաձայնության այլ որոշում չեն կայացնում:

5.3. Սույն Հուշագրում փոփոխությունները կատարվում են փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Համապատասխան փոփոխությունները բովանդակող փաստաթղթերը կցվում են Հուշագրին և կազմում դրա բաղկացուցիչ մասը:

5.4. Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում Կողմերը կարող են համատեղ ծրագրերի իրականացման նպատակով կնքել լրացուցիչ համաձայնագրեր, որոնք չեն կարող հակասել Հուշագրին:

6. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության հետ կապված տարաձայնությունները ենթակա են կարգավորման Կողմերի միջև բանակցությունների միջև:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն Հուշագիրը բացառիկ իրավունքներ չի վերապահում: Կողմերն ազատ են Հուշագրով նախատեսված համագործակցության առարկայի վերաբերյալ համաձայնագրեր և հուշագրեր կնքել այլ անձանց և մարմինների հետ:

7.2. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7.3. Սույն Հուշագիրը կազմված է երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ	**Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր**
Իշխան Կարապետյան	**Արշակուհի Թարվերդյան**